
ԶԱՎԵՇՏԸ ՀԱՅՈՑ ՀԱՐՄԱՆԵԿԱՆ ԾԻՍԱԿԱՐԳԻՆ ԱՌՆՉՎՈՂ
ԱՆԵԿԴՈՏՆԵՐՈՒՄ

ՍԱՐԳՍՅԱՆ Ա. Շ.

Վաղնջական ժամանակներից աշխարհի բոլոր ժողովուրդները գեր-
նաստանի շարունակականությունն ապահովել են ընտանիքներ ստեղ-
ծելով: Հազարամյակների ընթացքում ընտանիք կազմելու գործընթացը
նրանք սրբացրել, տոնի են վերածել՝ հարսանեկան ծիսակարգն ու դրան
հավատարիմ մնալու արարողակարգային տարրերը դարձնելով ընտանիքի
ամրության հիմնաքարը:

XIX դ. կեսից գիտատեխնիկական, սոցիալ-տնտեսական և կրթա-
մշակութային առաջընթացը պարտադրում է իրերի և երևույթների հանդեպ
նորովի մոտեցումներ ու գնահատականներ: Ինչպես մյուս ժողովուրդների,
այնպես էլ հայերի հին ու նոր սերունդների միջև մտածողության բախում-
ները դրսևորվում են նաև ժողովրդական ծիսակարգերի և արարողա-
կարգերի հանդեպ նրանց վերաբերմունքում: Դա արտացոլվել է նաև հայ-
կական անեկդոտներում՝ երգիծական մանրապատումներում ու զվարճա-
խոսություններում:

Չկա հարսանեկան ծիսակարգին առնչվող որևէ տարր, որի վերա-
բերյալ ժողովուրդը անեկդոտ ստեղծած չլինի՝ սկսած նախահարսանեկան՝
աղջկա փնտրտուքի, աղջիկտեսի, խնամախոսության, օժիտ-բաժինքի,
նշանդրեքի և այլ ծիսակարգերից, վերջացրած բուն հարսանեկան՝ հարսին
հագցնելու, կերուխումի, բաժակաճառերի, հարսի կամ մոր լացի, հայրա-
կան տնից դուրս բերելու, փեսայի տուն ոտք դնելու և հետհարսանեկան՝
հարս ու փեսայի ամուսնական կյանքի սկզբնավորման, կարմիր խնձորի,
ոտնալվայի և այլ արարողակարգերը:

Խնամախոսության թեմայով հայկական մի շարք անեկդոտներ ներկա-
յանում են զավեշտալի բաժակաճառերով, հարսնացուի գովքով ու անհեթեթ
խորհուրդներով:

– Իմ աղջիկը, Վռա՛մ ջան, այիբ չունի: Ասող-խոսող, անող-դնող, կույս,
մաքրասեր, համեստ, ամեն ինչը տեղը տեղին: Տա՛, փռշմանիլ չես: Ով
տարել ա, փռշմանել չի՞:

¹ “Երգիծական մանրապատում կամ զվարճապատում” և “զվարճախոսություն”
եզրույթները տարանջատել ենք՝ առաջինի համար հիմք ընդունելով սյուժետային՝ պա-
տումային հատկանիշը, երկրորդի պարագայում՝ անսյուժե՝ անպատում բնույթը: “Օտա-
րալեզու անեկդոտ” եզրույթը կիրառվում է թե՛ առաջին, թե՛ երկրորդ խմբի նմուշների
համար:

² Գյուլնազարյան Խ., Մեր գյուղի հանաքները, Ե., 1991, էջ 63:

Որոշ դեպքերում էլ երգիծապատումը ներկայացվում է տարատեսակ թեմաներին միահյուսված, ասենք՝ խնամախոսությունը՝ լեզվական արատի թլվատության հետ.

Իրեք քեռր (քույր) կելնեն, իրեքն էլ կլվատ (թլվատ): Էն մեկ օր մեր կերթա տյուս, աղչրկըներաց կապասրի:

– Իսկի չգրուցեհն մեկ մեկելու խետ, չէլնի թե ուզողներ գան, տոան վերեն ականջ անեն, իմնան, որ տուք լալ եք:

– Մեր կերթա, աղչրկըներ նստե չախրայ կը մանեն, ուզողները իկեր են տոան վերեն ականջ կանեն:

Մեկեն ճոչ աղչկա չախրկի լար կը կտրի:

– Վա յ, լար տտրա վ, – կասի ճոչ աղչիկ:

– Չթոթի, փաթութի, չթոթի, փաթութի, – կասի միճնեյն:

– Զյա, սևավորներ, մերս ծե ի նչ ապլտրեց, – պյարկոտ, պյարկոտ

կասի պստի քեռր:

Ուզողները կը տիսնան, որ իրենն էլ կլվատ են, թողնեն կերթան³:

Անցյալում պսակադրությունները գերազանցապես կատարվում էին դաշտային աշխատանքներն ավարտվելուց հետո՝ խոր աշնանը կամ էլ ձմռանը, և երբեմն նշանդրեքից հետո երիտասարդները ստիպված էին լինում երկար սպասել այդ բաղձալի օրվան: 1876 թ. հրատարակված՝ Գ. Սրվանձոյանցի «Մանանա» ժողովածուում տեղ է գտել հարսանեկան ծիսակարգին առնչվող մի գվարձապատում՝ «Աղջկան մը հնարքը», որի գավեշտի աղբյուրը դառնում է նշանված հարսի՝ չափածո հանգավոր խոսքով արտահայտած դժգոհությունը՝ կապված հարսանիքի ուշանալու հետ.

– Թո՛, թո՛, թո՛, // Ե՛րբ հասուննա՛. // Ե՛րբ քաղվունա՛, // Ե՛րբ քամվունա՛,

//

Ե՛րբ գինվանա՛, // Ե՛րբ խմվանա՛, // Ե՛րբ տանանա՛, // Ե՛րբ տի-
նինի՛...//Թո՛, թո՛, թո՛⁴:

Կովկասյան ու արևելյան ժողովուրդների բանարվեստում տեղ գտած հարսի լացը պայմանավորված էր կա՛մ նրա բռնի ամուսնության, կա՛մ էլ (էթե պսակը հարսի սրտով էր լինում) հայրական տնից հեռանալու հանգամանքով: Թե՛ 130 տարի առաջ Նազար-յանցի հրատարակած անեկդոտներից մեկում⁵, թե՛ Խ. Փորքշեյանի գրառման մեջ⁶ աղջկա լացն ազդում է հոր վրա, և վերջինս որոշում է չթողնել, որ աղջկան տանեն: Երկու պատումներում էլ աղջկա՝ արցունքների միջից արտաբերած գավեշտ առաջացնող խոսքն է դառնում անեկդոտի հանգուցալուծումը. «Չէ՛, մա մի,

³ Ծիծաղում են վանեցիները, հավաքել, կազմել են Վարազդատ Հարությունյանը և Նորա Մելիքյանը, Ե., 2006, էջ 129:

⁴ Սրվանձոյանց Գ., Երկեր, հ. 1, Մանանա, Ե., 1978, էջ 270-271:

⁵ Անեկդոտներ, հ. 3-րդ, աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, 1883, էջ 52:

⁶ Փորքշեյան Խ.Ա., Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը (Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 2, Ե., 1971, էջ 91):

համ լաց կ'ըլեն, համ կերթամ» (նորնախիջևանյան տարբերակում՝ **«Տուք իմ լացածին մի նայեք, ձեր անելուն արեք»**):

Հարսանեկան կրոնական ծիսակարգային անեկդոտների գերակշռող մասը (բացառությամբ պսակադրության) այսօր ժամանակավրեպ է: Կիրառությունից դուրս են եկել եկեղեցու սպասավորի կողմից հասության-չհասության՝ վավերացման, հարսի ու փեսայի հագուստն օրհնելու արարողակարգին⁸, եկեղեցուց ամուսնանալու հրամանագիրն ստանալուն⁹ վերաբերող զվարճապատումները:

Ճիշտ է, ոտնալվայի, կարմիր խնձորի, առանց աղջկան կամ փեսային տեսնելու պսակադրության գործառույթները ևս մեր օրերում արդեն անցյալ են դարձել, այնուամենայնիվ, դրանց առնչվող երգիծական մանրապատումներն ու զվարճախոսությունները դեռևս շարունակում են կենցաղավարել՝ հարմարեցվելով նոր ժամանակների մարդկանց մտածողությանն ու գործելակերպին: Այսպես, օրինակ, ոտնալվայի համար հարսի ստացած նվերն այսօրվա «ցուցամուլ» սկեսրայրների տված 100-դոլարանոցն է, իսկ անեկդոտում հարսի գոհունակությունն արտահայտվում է ավստասանքի խոսքերով, թե ինչու՞ սկեսրայրը չորս ոտք չունի¹⁰:

Անցյալում եղել են դեպքեր, երբ հարսն ու փեսան միայն հարսանիքից հետո էին իրար տեսնում, երբեմն էլ խնամախոսության ժամանակ փեսային մի սիրունատեսի էին ցույց տալիս, բայց եկեղեցական պսակադրությունից ու հարսանիքի ավարտից հետո էր միայն պարզվում, որ փեսան խաբվել է: Նմանատիպ իրողությունների հենքի վրա ստեղծված անեկդոտներից մեկում քողը բարձրացնելուց հետո հարսի՝ **Վի՞ր իսեո եմ խոսալու, վի՞ր իսեո չեմ խոսալու** հարցը հանկարծակիի է բերում փեսային և նրա՝ **Ամաաան, վիր իսեո կուզես՝ խոսա, մենակ թե իմ իսեո մի խոսա** պատասխանն էլ երգիծապատումում դառնում է անսպասելի ծիծաղի առաջացման պատճառը (ԱՄՇՀ):

Ավանդական սովորույթներն ու ծեսերը կամ էլ դրանց որոշ արարողակարգերը հաճախ են բախվում նոր սերնդի մտածողությանը: Ավագ սերնդի կողմից երբեմն փորձ է արվում դրանք կամ դրանց որոշ տարրեր պարտադրել կրտսեր սերնդին: Եթե վերջինս, օրինակ, թաղման արարողակարգի հերթագայության և դրա առանձին տարրերի կիրառության անհրաժեշտության վերաբերյալ պատրաստ է խորհրդակցել, հաշվի նստել ավագ սերնդի բանիմաց, այդ արարողակարգը հստակ իմացող անձնավորությունների կարծիքի հետ, ապա հարսանեկան գործառույթում ավագ սերնդի խոսքը, կարելի է ասել, մեծ մասամբ երկրորդ պլանում է. կամա թե

⁷ Անեկդոտներ, հ. 2, Տիֆլիս, 1877, էջ 37:

⁸ Անեկդոտներ, հ. 3, Թիֆլիս, էջ 42:

⁹ Անեկդոտներ, գուարճալի գրոյցներ, համառոտ դեպքեր և առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմագանեանց, Թիֆլիս, 1878, էջ 68:

¹⁰ Ա. Շ. Սարգսյանի անձնական հավաքածու, այսուհետև՝ ԱՄՇՀ, կնշվի բնագրին կից:

ակամա իրականացվող ավանդական ծիսակարգային որոշ տարրերին գու-
գահեռ՝ կրտսեր սերնդի ներկայացուցիչները մեծ մասամբ իրենք են
դրության տերը, իրենք են ընտրում նույնիսկ պսակադրության օրը, վայրը,
կերպը և այլն: Հենց հարսանեկան ծիսակարգային տարրերի պարտադիր
կամ ձևական կատարման ժամանակ էլ ստեղծվում և տարածում են գտնում
տարատեսակ զվարճապատումներ ու զվարճախոսություններ:

Կուսությունը չպահպանած հարսին անցյալում, գրեթե առանց բացա-
ռության, հետ էին ուղարկում հորանց տուն: Ժամանակները փոխվում են, և
չի կարելի ասել, որ ոչ կույս հարսներին դուրս են անում: Նոր ժամա-
նակներում ու նոր միջավայրում հարսանիքի ծիսակարգի հաջորդա-
կանությունը խախտած զույգը, որպեսզի ավանդապահ ծնողների առաջ
սներես չլինի, «ելք» է գտնում. հարսանիքի հաջորդ օրը սկեսրոջ հետ պար-
տեզ դուրս էլած նորահարսի՝ «Օխա՛յ, մայրի՛ կ, էս ի՛նչ դրախտ է: Էս դրախ-
տում ապրողը 6 ամսում՝ երեխա կրերի» և սկեսրոջ՝ «էս անգամ ինն ամ-
սում բեր, դրանից հետո՝ թեկուզ ամիսը՝ մեկ» խոսքերը դառնում են «Հինգ
ամսում երեխա բերող հարսը» զվարճապատումի հանգուցալուծումը¹¹:

Ժողովուրդը հարսանեկան ծիսակարգին առնչվող մի հետաքրքիր
անեկդոտ է ստեղծել անընդհատ տրտնջացողների, ամեն ինչի մեղքը
ուրիշների մեջ որոնողների վերաբերյալ.

**Հարսանիքի հաջորդ օրը հարսին հետ են ուղարկում: Աղջկա հերը
գալիս ա խնամու մոտ, ասում ա.**

– Ա՛յ խնամի, ախչկաս ինչի՞ օ՞ես հետ ուղարկել:

– Որովհետև ախչիկդ ախչիկ չէր:

– Պա՛հ, պա՛հ, պա՛հ, միթում երգիրդ երգիր է՞, որ ախչիկըս էլ ախչիկ
էղներ (ԱՄՇՀ):

XX դ. երկրորդ կեսից հայ ժողովրդական հարսանեկան արարողա-
կարգ են մուտք գործում այլ ժողովուրդների հարսանեկան ծիսակարգային
որոշ տարրեր: Այսպես, օրինակ, էթե անցյալում գրառած զվարճապատում-
ներում և զվարճախոսություններում խոռված փեսան հրաժարվում է գնալ
հարսի մոտ, քանի որ նրան տղմա չէր հասել¹², ապա նորօրյա գրառում-
ներում տղման փոխարինվել է տորթով (ԱՄՇՀ):

Ե՛վ անցյալում, և՛ մեր օրերում բազում հարսանեկան բաժակաճառային
զվարճախոսություններ են գրառվել: Դրանք հիմնականում ծիծաղ հարու-
ցող, անհեթեթ մաղթանք-ձևակերպումներ են, որոնք, հավանաբար, պայ-
մանավորված են լինում բաժակաճառ ասողի գրագետ երևալու ձգտումով,
ինչպես, օրինակ՝ «Աջակողմյան և ձախակողմյան բարեգամներ ջան,

¹¹ Մարկոսյան Ռ., Արարատյան բարբառը, Ե., 1989, էջ 252:

¹² Գալժայան Վ., Հայկական գրույցներ, Լոս Անջելես, 1944, էջ 105, Գրիգոր Ս., Զվարճալի
պատառաբաղ, Ե., 2006, էջ 48:

այսուհետև և ընդհանրապես ես խնում եմ ձեր նկատմամբ: Մեր նորապսակներին էլ ցանկանում եմ՝ մի ծերի բարձրանան¹³» (ԱՄՇՀ):

Հարսանեկան ծիսակարգային տարրերի տարատեսակ դրսևորումները հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում այնքան բազմազան են, բազմաշերտ ու ասելիքով հարուստ, որ դրանց հաղորդակցվողին ծիծաղի, բարձր տրամադրության հետ հստակ պատկերացում են տալիս այդ հնագույն ծեսի ու դրա արարողակարգային տարրերի և երևույթների, հին ու նոր ժամանակների մարդկանց փոխհարաբերությունների, մտածելակերպի, նիստուկացի, հայոց լեզվի և նրա բարբառների հարուստ բառազանձի ու դրա ինքնատիպ դրսևորումների վերաբերյալ:

ЮМОР В АНЕКДОТАХ НА ТЕМУ АРМЯНСКОГО СВАДЕБНОГО ОБРЯДА

САРКИСЯН А. Ш.

Резюме

Армянские народные юмористические миниатюры на тему свадебного обряда дают четкое представление о древнем ритуале, его церемонии, основных элементах, особенностях, о взаимоотношениях людей в прошлом, в настоящем, об их мышлении, бытии, нравах, об армянском языке, диалектной лексике, к которой самобытно проявлен юмор.

HUMOR ON THE TOPIC OF THE ARMENIAN WEDDING CEREMONY

A. SARGSYAN

Abstract

Armenian folk jokes on the wedding ceremony are so diverse, multi-layered and rich in content, that in communication, apart from laughter, high spirits, they also convey a clear understanding of the ancient ritual, its ceremonial elements and peculiarities, the relationship between people in the past and present, their way of thinking, their everyday lifestyle and customs, the intricacies of the Armenian language and its dialect vocabulary together with its unique ways of expression.

¹³ Լոռու խոսվածքում «մի ծերի» նշանակում է նաև անընդհատ: